



ՓՈՔՐ ԴՐԱՍԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - 2008թ.



**Համաշխարհային Բանկի Երևանի գրասենյակ
Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության
Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ**

Համաշխարհային Բանկի Երևանի գրասենյակը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) հետ համատեղ Փոքր Դրամաշնորհների Ծրագրի (ՓԳԾ) շրջանակներում հայտարարում է հայտ/առաջարկների մրցույթ: Դրամաշնորհները կազմում են 8.000-10.000 ԱՄՆ դոլար, որոնք մրցութային հիմունքներով կտրամադրվեն գործունեության առնվազն երկու տարվա փորձառություն ունեցող ոչ-կառավարական և շահույթ չհետապնդող տեղական կազմակերպություններին:

ՓԳԾ-ը օժանդակություն կցուցաբերի այն առաջարկներին, որոնք ուղղված կլինեն քաղաքացիական ներգրավվածության խթանմանը, այն է՝ հասարակության տարբեր շերտերի մոտեցումների և տեսակետների արտահայտման հնարավորությունների ընձեռնմանը, զարգացման գործընթացներում և քաղաքականությունների մշակման մեջ քաղաքացիական տարբեր նախաձեռնությունների ներգրավմանը և մասնակցության ապահովմանը: Այս պահանջների բավարարումը՝ հայտերի ֆինանսավորման կարևորագույն չափորոշիչներից մեկն են:

Ներկայացվող ծրագրերով նախատեսված միջոցառումները պետք է՝

- Խթանեն հասարակական համաձայնություն և սեփականատիրության զգացում՝ բարեփոխումների և աղքատության նվազեցման, ինչպես նաև զարգացման ռազմավարությունների նկատմամբ՝ ստեղծելով գիտելիքների փոխանակման ցանցեր, փոխըմբռնման նախադրյալներ, խորհուրսելով կառավարական հիմնարկների, քաղաքացիական հասարակության, դոնոր կազմակերպությունների և մասնավոր սեկտորի համագործակցությունը, և երբեմն նույնիսկ վերացնելով առկա լարվածությունը:
- Վերհանեն բնակչության աղքատ և խոցելի խմբերի խնդիրները՝ հավաստիացնելով, որ վերջիններիս տեսակետները արտացոլված են քաղաքականություններում և ծրագրային որոշումներում:
- Ուժեղացնեն զարգացման ծրագրերի ազդեցությունը՝ ապահովելով տեղական գիտելիքը, բացահայտելով հնարավոր ռիսկերը, ցուցաբերելով նպատակային աջակցություն և ընդլայնելով մասնակցությունը՝ ներառյալ համայնքային մակարդակում:
- Առաջ քաշեն նորարարական գաղափարներ և լուծումներ՝ տեղական մակարդակում զարգացման մարտահրավերների վերաբերյալ:
- Բարելավեն զարգացման ծրագրերի թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը, որոնք նպաստում են լավ կառավարման համար համապատասխան միջավայրի ստեղծմանը:
- Վերհանեն երիտասարդությանն առնչվող խնդիրները և քննարկումներ կազմակերպեն դրանց հնարավոր լուծումների շուրջ:

Ծրագրերը կարող են ներառել նաև խորհրդակցություններ և սեմինարներ, հրատարակումներ կամ ձայնա-տեսողական նյութերի պատրաստում: ՓԳԾ-ն օժանդակություն չի տրամադրի գործառնական, հետազոտական, ֆորմալ ակադեմիական ու կրթական բնույթի կամ ընթացիկ ինստիտուցիոնալ ծրագրերին: Այն չի կարող ներառել օժանդակության տրամադրում անհատներին՝ կրթաթոշակների կամ ճանապարհորդության և ուսման համար: Սիևնույն ժամանակ, ՀԿ-ների վարչական ծախսերը ևս չեն ֆինանսավորվի ՓԳԾ-ի շրջանակներում:

ՓԳԾ-ի հայտի ձևը կարող եք ձեռք բերել ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակից (Թումանյան փ, 2-րդ փակուղի, տուն 7/1: Հեռ/Ֆաքս 533862, 536758 կամ www.worldbank.org.am և www.osi.am կայքերում: Հայտերը կարելի է ներկայացնել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակ, վերը նշված հասցեով, երկուական տպագիր օրինակով: Ծրագրի իրականացման առավելագույն ժամկետը 12 ամիս է: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2008 թ. փետրվարի 1-ը, ժամը 17.00: